# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տնտեսական և սանիտարիգենիկ միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.07.2017թ. ժամը ***10⁰⁰***-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ս. Պետրոսյանը, Վ.Պետրոսյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**Օրակարգ**

***Հայտերի բացման և գնահատման մասին***

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-17/2» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110)**
2. **«ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ (Արմավիրի մարզ, գ. Բամբակաշատ, 14/1 փ. 3)**
3. **«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ (ք. Երևան, Ա. Ավետիսյան 78, բն.3)**
4. **Հայկ Գալստյան Ա/Ձ (ք. Հրազդան, կենտրոն թաղ.84/5)**
5. **«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ (ք. Երևան, Նաիրի Զարյան 22 ա)**
6. **«Հաղթանակ 2000» ՍՊԸ (ք. Երևան, Անդրանիկի 4/8)**

**Հանձնաժողովը որոշեց՝**

Փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով նիստը հետաձգել 1 աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 07.07.2017թ. ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ____________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ս. Պետրոսյան

____________ Վ.Պետրոսյան

____________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Մ.Մուրադյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տնտեսական և սանիգենիկ միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.07.2017թ. ժամը $15^{00}$-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ս. Պետրոսյանը, Վ.Պետրոսյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**1. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

1.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

2.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **«Հաղթանակ 2000» ՍՊԸ** հայտի.

1. **«Հաղթանակ 2000» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտի **Հավելված 10-ում**՝ տուժանքի մասին համաձայնագրում ամսաթիվը լրացված չէ :

**«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ և «Հաղթանակ 2000» ՍՊԸ** կազմակերպությունների կողմից տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը ներկայացված է մեկ PDF ֆայլով և էլեկտրոնային ստորագրությունը դրված է միայն տուժանքի համաձայնության վրա կամ միայն վճարման պահանջագրի վրա:

**Հանձնաժողովը որոշեց՝**

Նիստը կասեցնել և լիազոր մարմին հարցում ներկայացնել, պարզելու թե արդյո՞ք մասնակցին մերժելու հիմք է հանդիսանում մասնակցի կողմից տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը մեկ PDF ֆայլով ներկայացնելու դեպքում միայն տուժանքի համաձայնության վրա կամ միայն վճարման պահանջագրի վրա էլեկտրոնային ստորագրելը: Հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ՖՆ-ից պարզաբանում ստանալու օրը՝ պատասխանի մինչև 17:00-ն ստանալու դեպքում, հակառակ դեպքում հաջորդ աշխատանքային օրը, ժամը նախօրոք համաձայնացնելով, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ ________________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________________ Ս. Պետրոսյան

________________ Վ.Պետրոսյան

________________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Մ.Մուրադյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4**

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տնտեսական և սանիհգենիկ միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.07.2017թ. ժամը ***16***$^{30}$-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**1. ՀՀ ՖՆ պարզաբանման վերաբերյալ**

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պարզաբանման , մասնակցի կողմից տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը մեկ PDF ֆայլով ներկայացնելու դեպքում միայն տուժանքի համաձայնության վրա կամ միայն վճարման պահանջագրի վրա էլեկտրոնային ստորագրելը մերժման հիմք չի հանդիսանում:

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը**

| Չ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ** | **«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ** | **«ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ** | **«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ** | **Հայկ Գալստյան Ա/Ձ*** | **«Հաղթանակ 2000» ՍՊԸ*** |
| 1 | զուգարանի թուղթ | 2000 | 240000 | 175833 | 286667 | 205000 | 151667 | 207000 | 194000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | փայլեցնող կտորներ | 300 | 72000 | | | 86200 | 97500 | | 59100 |
| 3 | լվացող նյութեր | 100 | 65000 | | | 38000 | 150000 | | 24800 |
| 4 | մաքրող կտորներ | 300 | 54000 | | 71750 | 86200 | 92500 | | 42000 |
| 5 | կոյուղու խողովակներ | 20 | 31000 | | 46000 | 20500 | 40833 | | 80000 |
| 6 | հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա | 50 | 150000 | | 210417 | 144000 | 207917 | | 36000 |
| 7 | դույլ պլաստմասե | 100 | 55000 | 69333 | 110000 | 65700 | 65000 | | 43500 |
| 8 | ավելներ, խոզանակներ և այլ կենցաղային մաքրող պարագաներ | 10 | 32000 | | 35000 | 28800 | 35833 | | 10900 |
| 9 | ծալվող աստիճաններ | 1 | 80000 | | 49167 | 83300 | 65833 | | 50400 |

* Կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ չվճարող

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը արձանագրեց, որ**

Հաշվի առնելով, որ ընթացակարգի 2, 4, 6, 7, 8 չափաբաժինների համար ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Մերժել **«Հաղթանակ 2000» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2017թ. հուլիսի 18-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

**Քարտուղարին՝**

Մեկ աշխատանքային օրում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝

________ Վ.Պետրոսյան

________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________ Մ.Մուրադյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տնտեսական և սանիհիգենիկ միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.07.2017թ. ժամը $11^{00}$-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Է.Արշակյանը, քարտուղար Մ.Մուրադյանը և **«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ լիազոր անձ՝ Հարություն Համլետի Հայրապետյանը:**

### 1. Միաժամանակյա բանակցությունների մասին

**«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն** 2, 4, 6, 7, 8 չափաբաժինների համար առաջարկեց նոր գին.

/ ՀՀ դրամ/

| Չ/Հ | Գնման առարկայի անվանում | Նախահաշվային գին | Գները՝ առանց ԱԱՀ-ի | Գները՝ ԱԱՀ-ով |
|---|---|---|---|---|
| 2 | փայլեցնող կտորներ | 72000 | 60000 | 72000 |
| 4 | մաքրող կտորներ | 54000 | 45000 | 54000 |
| 6 | հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա | 150000 | 125000 | 150000 |
| 7 | դույլ պլաստմասե | 55000 | 45833.33 | 55000 |
| 8 | ավելներ, խոզանակներ և այլ կենցաղային մաքրող պարագաներ | 32000 | 26666.67 | 32000 |

**Հանձնաժողովը որոշեց.**

1.1 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1, 2, 4, 6, 7, 8 չափաբաժինների համար **«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ** -ին,
3, 5 չափաբաժինների համար **«ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ** –ին
9 չափաբաժնի համար **«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ** –ին:

1.2 Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1 չափաբաժնի համար **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ** –ին,
9 չափաբաժնի համար **«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ** –ին:

2-8 չափաբաժինների համար մնացած մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են նախահաշվային գինը:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _________________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝

_________________ Վ.Պետրոսյան

_________________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _________________ Մ.Մուրադյան

**«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ լիազոր անձ՝ Հարություն Համլետի Հայրապետյան** ____________